ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 20

«09» 04 2018 թ.Ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԴԱՏԱԽԱԶ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված պահանջի կատարումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 23-րդ հոդվածով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի դատախազ անդամների ընտրության կարգը՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:
3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018 թվականի ապրիլի 9-ի
N20 հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԴԱՏԱԽԱԶ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) դատախազ անդամների ընտրության կարգը:

2. Հանձնաժողովի դատախազ անդամների ընտրության նպատակով գլխավոր դատախազի կողմից հրավիրվում է նիստ, որին մասնակցում են գլխավոր դատախազը, գլխավոր դատախազի՝ էթիկայի հանձնաժողովի անդամ չհանդիսացող տեղակալները, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, Երևան քաղաքի դատախազը, մարզերի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազները:

3. Նիստը նախագահում է գլխավոր դատախազը կամ նրա հանձնարարությամբ՝ էթիկայի հանձնաժողովի անդամ չհանդիսացող տեղակալներից մեկը (այսուհետ՝ նախագահող):

4. Նիստը համարվում է իրավազոր, եթե ներկա է սույն կարգի 2-րդ կետում նշված դատախազների երկու երրորդը:

5. Նիստը բացելուց հետո նախագահողը մասնակիցներին առաջարկում է ներկայացնել հանձնաժողովի դատախազ անդամների թեկնածուներին: Յուրաքանչյուր մասնակից կարող է ներկայացնել հանձնաժողովի անդամի միայն 1 թեկնածուի՝ նախապես ստացած լինելով վերջինիս համաձայնությունը: Թեկնածու կարող է առաջադրվել դատախազի առնվազն 3 տարվա ստաժ ունեցող դատախազը:

6. Նիստի մասնակիցների կողմից պետք է առաջարկվի առնվազն 3 թեկնածու:

7. Հանձնաժողովի դատախազ անդամների ընտրությունն իրականացվում է փակ գաղտնի քվեարկությամբ, որի կազմակերպման տեխնիկական ապահովումն իրականացնում է գլխավոր քարտուղարը:

8. Փակ գաղտնի քվեարկությունը կազմակերպելու և անցկացնելու համար նիստի մասնակիցները ձայների պարզ մեծամասնությամբ ընտրում են հաշվիչ հանձնաժողովի երեք անդամ: Տարիքով ավագը դառնում է նախագահ:

9. Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար հաշվիչ հանձնաժողովի կողմից պատրաստվում են նիստի մասնակիցների թվով քվեաթերթիկներ, որոնցից յուրաքանչյուրում նշվում են հանձնաժողովի դատախազ անդամների առաջադրված թեկնածուների տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, զբաղեցրած պաշտոն)՝ դիմացը վանդակ նշումի համար:

10. Եթե քվեարկության են դրվում թափուր տեղերի քանակին հավասար թվով թեկնածուներ, ապա յուրաքանչյուր թեկնածուի տվյալների դիմաց նշվում է «կողմ» ու «դեմ» նշումով վանդակներ:

11. Նիստի մասնակիցներն իրենց նախընտրած առավելագույնը երեք թեկնածուներին կողմ են քվեարկում վերջիններիս անվան դիմաց «V» նշում կատարելով:

12. Սույն կարգի 10-րդ կետով նախատեսված դեպքում յուրաքանչյուր թեկնածուի անվան դիմաց նշում է կատարվում միայն մեկ վանդակում:

13. Երեքից ավելի թեկնածուի առջև նշում պարունակող, 12-րդ կետի պահանջի խախտմամբ, վնասված կամ այլ գրառում պարունակող քվեաթերթիկները հաշվիչ հանձնաժողովի կողմից ճանաչվում են անվավեր:

14. Հանձնաժողովի դատախազ անդամ հաջորդաբար ընտրված են համարվում քվեարկությանը մասնակցած դատախազների՝ առավել թվով կողմ ձայներ ստացած առաջին երեք թեկնածուները:

15. Սույն կարգի 10-րդ կետով նախատեսված կարգով քվեարկության դեպքում յուրաքանչյուր թեկնածու ընտրված է համարվում, եթե ստացել է առավել «կողմ» ձայներ:

16. Այն դեպքում, երբ քվեարկության արդյունքում հանձնաժողովի դատախազ անդամի թեկնածուների հավասար թվով կողմ ձայներ ստանալու պատճառով հնարավոր չէ որոշել ընտրված թեկնածուին, ապա նշված թեկնածուներից ընտրվածին որոշելու համար հաշվիչ հանձնաժողովի կողմից անցկացվում է վիճակահանություն:

17. Եթե նիստի ընթացքում չեն ընտրվում հանձնաժողովի անդամ բոլոր դատախազները, ապա այդ նպատակով գլխավոր դատախազի կողմից 5 օրվա ընթացքում հրավիրվում է նոր նիստ:

18. Հանձնաժողովի դատախազ անդամների ընտրության նպատակով առաջին նիստը հրավիրվում է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն (ՀՕ-198-Ն) ուժի մեջ մտնելուց հետո՝ 10 օրվա ընթացքում:

19. Հանձնաժողովի դատախազ անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում ընտրության հերթական նիստը հրավիրվում է գլխավոր դատախազի կողմից:

20. Հանձնաժողովի դատախազ անդամի ընտրության հերթական նիստը հրավիրվում է հանձնաժողովի դատախազ անդամի թափուր տեղ առաջանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: